Արձանագրություն N 2

Երևանի պետական համալսարանի
2011 թ. փետրվարի 24-ի գիտական խորհրդի նիստի

Նիստին ներկա էին գիտխորհրդի 103 անդամներից 84-ը:

Խորհրդի նախագահ, ԵՊՀ ռեկտոր, պրոֆեսոր Ա. Հ. Սիմոնյանն առաջարկեց հաստատել հետևյալ օրակարգը.

Օրակարգ.

1. Դոցենտի, պրոֆեսորի գիտական կոչումների շնորհում:
   (Զեկ.՝ ՀՀ ԳԱԱ ակադ. Է. Վ. Չուբարյան, տ. գ. դ., պրոֆ. Հ. Լ. Սարգսյան)
2. ԵՊՀ գիտական խորհրդի 2010/2011 ուստարվա 2-րդ կիսամյակի ժամանակացույցի հաստատում:
   (Զեկ.՝ գիտքարտուղար Վ. Ս. Պետրոսյան)
3. ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի կազմում Կովկասագիտության կենտրոնի ստեղծման մասին:
   (Զեկ.՝ ռեկտոր Ա. Հ. Սիմոնյան)
4. «Կրեդիտային համակարգով առկա ուսուցմամբ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգում» փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին: (Զեկ.՝ պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյան)
5. ԵՊՀ կրթական ծրագրերի հաստատման կարգի հաստատում:
   (Զեկ.՝ պրոռեկտորի տեղակալ Ա. Ս. Բուդաղյան)
6. Անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակի հաստատում: (Զեկ.՝ պրոռեկտորի տեղակալ, Ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Գ. Ժամհարյան)
7. Սոցիոլոգիայի ֆակուլտետի կազմում «Սոցիոլոգիայի պատմության և տեսությունների» ամբիոնի ստեղծման մասին: (Զեկ.՝ Սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան Ա. Ե. Մկրտիչյան)
8. «Սոցիոլոգիայի ամբիոնը»՝ «Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի» վերանվանելու մասին: (Զեկ.՝ Սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան Ա. Ե. Մկրտիչյան)
9. «Անվտանգության հիմնահարցերի և եվրատլանտյան հետազոտություն-ների հայկական կենտրոնի» ստեղծման մասին:
   (Զեկ.՝ ռեկտոր Ա. Հ. Սիմոնյան)
10. Ընթացիկ հարցեր:

Մինչ օրակարգի հարցերին անցնելը ԵՊՀ ռեկտոր, պրոֆեսոր Ա. Հ. Սիմոնյանը հանդես եկավ ներածական խոսքով:

Լսեցին. - Դոցենտի, պրոֆեսորի գիտական կոչումների շնորհման հարցը:

Մրցութային հանձնաժողովների նախագահներ Է. Չուբարյանի և Հ. Սարգսյանի՝ մասնակիցներին ներկայացնելուց հետո թեկնածուներին թույլատրվեց ընտրվելու փակ, գաղտնի քվեարկությամբ:

Դոցենտի գիտական կոչում հայցող հավակնորդներն էին՝

1.	Նիկողոսյան Արսեն Սերժիկի	քաղ. դատավարության ամբ. ասիստենտ	իրավ. գիտ. թեկնածու /2007/ ԺԲ.00.04 – քաղ. դատավարություն
2.	Մարտիրոսյան Անուշ Մանվելի	ռադիոհեռուստատեսային ժուռնալիստիկայի ամբ. ասիստենտ	բանասիր. գիտ. թեկնածու /2007/ Ժ.01.06 – ժուռնալիստիկա
3.	Գրիգորյան Գայանե Էդուարդի	թարգմանության տեսության և պրակտիկայի ամբ. դասախոս	Ժ.02.07- գերմանական լեզուներ
4.	Ստեփանյան Սերգեյ Լևոնի	արտասահմանյան գրականության ամբ. ասիստենտ	բանասիր. գիտ. թեկնածու /2009/ Ժ.01.07 - արտասահմանյան գրականություն
5.	Քարիմյան Լիզա Ռուբենի	կրոնի տեսության և պատմության ամբ. ասիստենտ	պատմ. գիտ. թեկնածու /2010/ Է.00.00 – պատմության
6.	Բրուտյան Անահիտ Խորենի	մամուլի պատմության և տեսության ամբ. ասիստենտ	բանասիր. գիտ. թեկնածու /2008/ Ժ.00.06 – ժուռնալիստիկա
7.	Սարգսյան Գոհարիկ Արամայիսի	կրոնի պատմության և տեսության ամբ. ասիստենտ	փիլ. գիտ. թեկնածու /2010/ Թ.00.05 – կրոնի փիլիսոփայություն, կրոնի տեսության և պատմություն
8.	Ասատրյան Հայկ Ալբերտի	դիֆ. հավասարումների և ֆունկցիոնալ անալիզի ամբ. ասիստենտ	ֆիզմաթ. գիտ. թեկնածու /2007/ Ա.01.02 - դիֆերենցիալ հավասարումներ

Պրոֆեսորի գիտական կոչում հայցող հավակնորդներն էին՝

1.	Ավետիսյան Արա Սերգեյի	մեխանիկայի ամբ. պրոֆեսոր	ֆիզմաթ.գիտ. դոկտոր /1998/ Ա.02.04 - դեֆորմացվող պինդ մարմնի մեխանիկա ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ /2006/
2.	Մկրտիչյան Արթուր Երվանդի	սոցիոլոգիայի ֆակ.-ի դեկան, սոցիոլոգիայի ամբ. դոցենտ	փիլ. գիտ. դոկտոր /2009/ ԻԲ.00.01 – սոցիոլոգիայի պատմություն դոցենտ – 2005 թ.

Քվեարկությանը մասնակցեցին 84 անդամ:
Ստեղծվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝

Միրզոյան Հրաչիկ – նախագահ
Ասատրյան Գառնիկ
Կարաբեկյան Սամվել
Ակոպյան Ցոլակ
Ազգալդյան Հարություն

Դոցենտի գիտական կոչման համար թեկնածուները ընտրվեցին փակ, գաղտնի քվեարկությամբ հետևյալ ձայներով.

1. Նիկողոսյան Արսեն Սերժիկի – կողմ - 80, դեմ - 4, անվավեր – 0
2. Մարտիրոսյան Անուշ Մանվելի – կողմ - 79, դեմ - 5, անվավեր – 0
3. Գրիգորյան Գայանե Էդուարդի – կողմ - 81, դեմ - 3 , անվավեր – 0
4. Ստեփանյան Սերգեյ Լևոնի – կողմ - 82, դեմ - 2 , անվավեր – 0
5. Քարիմյան Լիզա Ռուբենի – կողմ - 81, դեմ - 3 , անվավեր – 0
6. Բրուտյան Անահիտ Խորենի – կողմ - 75, դեմ - 9, անվավեր – 0
7. Սարգսյան Գոհարիկ Արամայիսի – կողմ - 82, դեմ - 2 , անվավեր – 0
8. Ասատրյան Հայկ Ալբերտի – կողմ - 82, դեմ - 2, անվավեր – 0

Պրոֆեսորի գիտական կոչման համար թեկնածուները ընտրվեցին փակ, գաղտնի քվեարկությամբ հետևյալ ձայներով.

1. Ավետիսյան Արա Սերգեյի – կողմ – 51, դեմ – 30, անվ. – 3
2. Մկրտիչյան Արթուր Երվանդի – կողմ – 56, դեմ – 27, անվ. – 1

Որոշեցին. –1. Հաստատել հաշվիչ հանձնաժողովի ներկայացրած արդյունքները:
2. Վերոհիշյալ հավակնորդներին շնորհել համապատասխանաբար պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ:
3. 15 օրվա ընթացքում նրանց գործերը ներկայացնել բոհ՝ շնորհված գիտական կոչումները հաստատելու և դիպլոմներ շնորհելու համար:

Լսեցին. - ԵՊՀ գիտական խորհրդի 2010/2011 ուստարվա 2-րդ կիսամյակի ժամանակացույցի հաստատման մասին:
(Զեկ.՝ գիտքարտուղար Վ. Ս. Պետրոսյան)

Որոշեցին. - ԵՊՀ գիտական խորհրդի 2010/2011 ուստարվա 2-րդ կիսամյակի ժամանակացույցը հաստատել:

Լսեցին . - ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի կազմում Կովկասագիտության կենտրոնի ստեղծման մասին:
(Զեկ.՝ ռեկտոր Ա. Հ. Սիմոնյան)

Որոշեցին. - ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի կազմում ստեղծել «Կովկասագիտության կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանումը:

Լսեցին. - «Կրեդիտային համակարգով առկա ուսուցմամբ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգում» **(հաստատված ԵՊՀ ԳԽ 2009թ. հունվարի 29-ի թիվ 1 նիստում)** փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
(Զեկ.՝ պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյան)

Որոշեցին.- 7-րդ՝ *Քննությունների վերահանձնումը և դասընթացի կրկնումը* բաժնի 2-րդ կետից (էջ 20) հանել ստացիոնար բուժմանը վերաբերող դրույթը:

Լսեցին. - ԵՊՀ կրթական ծրագրերի հաստատման կարգի հաստատում:
(Զեկ.՝ պրոռեկտորի տեղակալ Ա. Ս. Բուդաղյան)

Որոշեցին. - Առաջնորդվելով ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի (2010-2014 թթ.) I. բ) խնդրի 5-րդ կետի դրույթներով՝

1. **Հաստատել «ԵՊՀ կրթական ծրագրերի հաստատման կարգը»՝ ըստ ներկայացված նախագծի:**
2. **Հանձնարարել՝**

ա/ Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին՝ մինչև սույն թվականի մայիսի 10-ը մշակել և գիտական խորհրդի հաստատմանը ներկայացնել «ԵՊՀ կրթական ծրագրերի մշտադիտարկման և պարբերական վերանայման կարգերը»:

բ/ ԵՊՀ ֆակուլտետներին և կրթական կենտրոններին՝

- **2012/2013 ուստարվանից ԵՊՀ բոլոր նոր ստեղծվող բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերը պետք է անցնեն արտոնման, ներքին փորձաքննության և հաստատման գործընթաց՝ համաձայն սույն կարգի:**

Լսեցին.- Անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակի հաստատում:
(Զեկ.՝ պրոռեկտորի տեղակալ, Ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Գ. Ժամհարյան)

Որոշեցին.- Անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ներկայացված ցուցակը

հաստատել:

Լսեցին.- ԵՊՀ Սոցիոլոգիայի ֆակուլտետի կազմում «Սոցիոլոգիայի պատմության և տեսությունների ամբիոն» ստեղծելու մասին: (Զեկ.՝ Սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան Ա. Ե. Մկրտիչյան)

Որոշեցին. - ԵՊՀ Սոցիոլոգիայի ֆակուլտետի կազմում ստեղծել «Սոցիոլոգիայի պատմության և տեսությունների ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանումը:

Լսեցին .- Երևանի պետական համալսարանի Սոցիոլոգիայի ֆակուլտետի «Սոցիոլոգիայի ամբիոնը»՝ «Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի» վերանվանելու մասին:
(Զեկ.՝ Սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան Ա. Ե. Մկրտիչյան)

Որոշեցին.-Երևանի պետական համալսարանի Սոցիոլոգիայի ֆակուլտետի «Սոցիոլոգիայի ամբիոնը» վերանվանել «Կիրառական սոցիոլոգիայի ամբիոն»:

Լսեցին. - «Անվտանգության հիմնահարցերի և եվրատլանտյան հետազոտությունների հայկական կենտրոնի» ստեղծման մասին: (Զեկ.՝ ռեկտոր Ա. Հ. Սիմոնյան)

Որոշեցին. - Ստեղծել Երևանի պետական համալսարանի «Անվտանգության հիմնահարցերի և եվրատլանտյան հետազոտությունների հայկական կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանումը:

Լսեցին. - Ընթացիկ հարցեր:

Ընթացիկ հարցեր.

1. «ԵՊՀ պատվավոր պրոֆեսորի» կոչումներ շնորհելու մասին:
   (Զեկ.՝ ԵՊՀ ռեկտոր Ա. Հ. Սիմոնյան)
2. « Երևանի պետական համալսարանի լավագույն ուսանող» ամենամյա մրցանակաբաշխության կազմակերպման և անցկացման կանոնակարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
   (Զեկ.՝ ԵՊՀ պրոռեկտոր Ռ. Լ. Մարկոսյան)

Լսեցին.- ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի Քաղաքացիական իրավունքի ամբիոնի պրոֆեսորներ Տ. Բարսեղյանի և Գ. Ղարախանյանի

խմբագրությամբ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, երրորդ մաս, 4-րդ հրատարակություն (լրացումներով և փոփոխություններով)» վերտառությամբ դասագիրքը տպագրության երաշխավորելու մասին:
(Զեկ.՝ ԵՊՀ ռեկտոր Ա. Հ. Սիմոնյան)

Որոշեցին.- Հաշվի առնելով ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի և Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը, ֆակուլտետի մեթոդխորհրդի դրական եզրակացությունը, ինչպես նաև այն, որ նշված աշխատությունը պատշաճ գիտական մակարդակով գրված ուսումնամեթոդական աշխատանք է, որն ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական նշանակություն,

1. Դիմել ՀՀ ԿԳՆ Կրթության Ազգային ինստիտուտին՝ ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի Քաղաքացիական իրավունքի ամբիոնի պրոֆեսորներ Տ. Բարսեղյանի և Գ. Ղարախանյանի խմբագրությամբ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, երրորդ մաս, 4-րդ հրատարակություն (լրացումներով և փոփոխություններով)» վերտառությամբ աշխատանքն իբրև դասագիրք հաստատելու միջնորդությամբ:
2. ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի Քաղաքացիական իրավունքի ամբիոնի պրոֆեսորներ Տ. Բարսեղյանի և Գ. Ղարախանյանի խմբագրությամբ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, երրորդ մաս, 4-րդ հրատարակություն (լրացումներով և փոփոխություններով)» վերտառությամբ դասագիրքը երաշխավորել տպագրության:

Լսեցին.- ԵՊՀ Ֆիզիկայի ֆակուլտետի Ակադեմիկոս Վ. Համբարձումյանի անվան ընդհանուր ֆիզիկայի և աստղաֆիզիկայի ամբիոնի վարիչ Դ. Մ. Սեդրակյանի և Դ. Հ. Բաղալյանի «Թերմոդինամիկա և վիճակագրական ֆիզիկա» վերտառությամբ դասագիրքը տպագրության երաշխավորելու մասին:
(Զեկ.՝ ԵՊՀ ռեկտոր Ա. Հ. Սիմոնյան)

Որոշեցին.- Հաշվի առնելով ԵՊՀ Ֆիզիկայի ֆակուլտետի խորհրդի և Ակադեմիկոս Վ. Համբարձումյանի անվան ընդհանուր ֆիզիկայի և աստղաֆիզիկայի ամբիոնի ամբիոնի միջնորդությունը, ֆակուլտետի մեթոդխորհրդի դրական եզրակացությունը, ինչպես նաև այն, որ նշված աշխատությունը պատշաճ գիտական մակարդակով գրված ուսումնամեթոդական աշխատանք է, որն ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական նշանակություն,

1. Դիմել ՀՀ ԿԳՆ Կրթության Ազգային ինստիտուտին՝ ԵՊՀ Ֆիզիկայի

ֆակուլտետի Ակադեմիկոս Վ. Համբարձումյանի անվան ընդհանուր ֆիզիկայի և աստղաֆիզիկայի ամբիոնի վարիչ Դ. Մ. Սեդրակյանի և Դ. Հ. Բաղալյանի «Թերմոդինամիկա և վիճակագրական ֆիզիկա» վերտառությամբ աշխատանքն իբրև դասագիրք հաստատելու միջնորդությամբ:

2. ԵՊՀ Ֆիզիկայի ֆակուլտետի Ակադեմիկոս Վ. Համբարձումյանի անվան ընդհանուր ֆիզիկայի և աստղաֆիզիկայի ամբիոնի վարիչ Դ. Մ. Սեդրակյանի և Դ. Հ. Բաղալյանի «Թերմոդինամիկա և վիճակագրական ֆիզիկա» վերտառությամբ դասագիրքը երաշխավորել տպագրության: